

յանունն իրենց քաղաքին կոչոտ Պատրիարքին ներկայացան եւ “կարի ստիպմամբ եւ մեծ ազաղակաւ” զՍարգիս Վ. իրենց Առաջնորդ դնել ինդրեցին: Սակայն կոչոտ չուզելով զըզուել իր քարոզչէն՝ ընդդիմացաւ կեսարացւոց եւ հրամայեց որ ուրիշ մը դնեն: Կեսարացիք գրգռուած՝ աղերսագիր գրեցին Երուսաղեմի Գրիգոր Շրջթայակիր Պատրիարքին, որ կոչոտի դասընկերն ու մտերիմն էր, որպէս զի ասիկայ միջնորդ ըլլայ եւ զկոչոտ համոզէ: Գրիգոր Պատրիարք գրեց կոչոտին, որուն կոչոտ չկրնալով ընդդիմանալ, զՍարգիս Վ. ընտրեալն՝ կեսարիոյ Առաջնորդ անուանեց 1730ին, եւ արքունի հրովարտակ հանել տուաւ: Սարգիս Վ. քանի մ’ամիս ետքը մեծաւ շքով “Մաժակ” (կեսարիա) գնաց, հետն ունենալով իր մեծ դասակիցն Յակոբ Վ. Նալեան: 1731ին կեսարիա հասաւ եւ ընդունուեցաւ մեծաւ հանդիսիւ: Քանի մ’ամիս ետքն ալ Նալեան Վ. ետ դարձաւ ի Կ. Պոլիս:

Սարգիս Վ. շատ գոհ ըրաւ կեսարացիներէ: Կեսարու Ս. Կարապետ հին վանքը պարտքերու տակ ընկճած էր: Սարգիս Վ. սոյն պարտքը ջնջելու համար սկսաւ պտըտիլ եւ ժողովորդէն կամաւոր տուրք ժողովել: Այլեւայլ տեղերէն անցնելով Ատանա եկաւ, ուստի ի Բերիա (Հալէպ), եւ պէտք եղած դրամն հաւաքելով՝ իւր աթոռը դարձաւ, պարտքը վճարեց: Քիչ ետքը Կ. Պոլիս գնաց՝ Էջմիածին երթալու եւ եպիսկոպոս ձեռնադրուելու համար: